

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2010 թվականի անցած ամիսների փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա առաջին ինն ամիսներին արձանագրվել է տնտեսության վերականգնում, որը հանգեցնում է մակրոտնտեսական իրավիճակի բարելավման՝ նախանշելով լավատեսական սպասումներ: Տնտեսական ակտիվության վերականգնման գործընթացը հիմնականում պայմանավորված է թե համաշխարհային տնտեսության վերականգնմամբ, և թե ՀՀ կառավարության նախորդ տարվա ընթացքում իրականացրած հակաճգնաճամային ակտիվ գործողություններով: Ընթացիկ տարվա ինն ամիսների տվյալներով տնտեսական աճի տեմպը գերազանցել է 2009 թվականի պետական բյուջեի նախագծի և 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակներում կանխատեսված ցուցանիշները:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է 2.8% տնտեսական աճ, որն արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության աճ՝ հատկապես գրանցելով բարձր արտահանման աճ՝ 43.8%: Տնտեսության վերականգնմամբ և գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով պայմանավորված՝ 2010 թվականի սեպտեմբերի միջին գնաճը գրանցվել է համեմատաբար բարձր՝ 7.8%: Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է նաև պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 20.5% աճ, իսկ ընթացիկ ծախսերի գծով աճը կազմել է 6.8%, արդյունքում առաջին ինն ամիսներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող:

Համախառն պահանջարկ¹: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է շուրջ 1%-ով: Վերջնական սպառման աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ բնակչության տնօրինվող եկամուտների աճով: Վերջնական սպառման

¹ Այս հատվածում բերված ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2010 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել են համապատասխանաբար 12.8 և 87.2 տոկոս, ընդ որում, իրական արտահայտությամբ մասնավոր սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 1.7%-ով, իսկ պետական սպառումը նվազել է 2.4%-ով:

Կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 2.7%-ով՝ հիմնականում մասնավոր ներդրումների աճի հաշվին, որը սակայն զուգակցվել է պետական ներդրումների շուրջ 12% կրճատմամբ:

2010 թվականի հունվար-սեպտեմբերին ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը դրամային արտահայտությամբ բարելավվել է 4.9%-ով, ընդ որում, արտահանման իրական ծավալը դրամային արտահայտությամբ աճել է 13%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ², ինչպես նաև նախորդ տարում կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ աճել է 9.2%-ով:


Համախառն առաջարկ: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 2386.67 մլրդ դրամ, ընդ որում իրական ՀՆԱ-ն աճել է 2.8%-ով, 9.8% դեֆլյատորի պայմաններում: Ընդ որում, տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության, գրանցվել են աճի ցուցանիշներ:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ծառայությունների ոլորտը տնտեսական աճին մեծ նպաստում է ունեցել: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.2 տոկոսային կետը, իսկ ծառայությունների իրական աճը կազմել է 5.3%: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) աճել է 9.7%-ով՝ տնտեսական աճին նպաստելով 1.3 տոկոսային կետով, իսկ շինարարությունն աճել է 2.7%-ով և նպաստել ևս 0.5 տոկոսային կետով: Գյուղատնտեսությունը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 17.8%-ով՝ 3 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով աճին: Գծապատկեր 1-ում

² Գնային մրցունակությունը բնութագրվում է իրական փոխարժեքով, երբ կարժամկետում արժեզրկվում է ասում են, որ երկրի արտահանողները գտնվում են բարենպաստ գնային մրցունակության պայմաններում և հակառակը:

ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:

Գծապատկեր 1. 2009 և 2010 թվականների հունվար-սեպտեմբերին ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2009 թվականների և 2010 թվականի հունվար-սեպտեմբերին իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010 հունվար- սեպտեմբեր
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.7	106.9	85.8	102.8
Գյուղատնտեսություն	114.2	111.2	100.5	110.4	103.3	99.9	82.2
Արդյունաբերություն	102.2	105.6	97.5	102.8	102.1	92.1	109.7
Շինարարություն	115.3	127.9	137.7	118.2	111.3	57.7	102.7
Ծառայություններ	112.7	115.0	116.0	112.5	104.8	99.9	105.3
Զուտ անուղակի հարկեր	102.4	112.4	114.9	135.9	117.1	79.3	115.9

Արդյունաբերություն³: 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների 10.9% աճ՝ 2009

³ 2010 թվականի հունվար-սեպտեմբերի արդյունաբերության ցուցանիշները վերաբերում են ոչ թե ավելացված արժեքներին, այլ թողարկման ծավալներին:

թվականի նույն ժամանակահատվածի 11.4% նվազման դիմաց: Ընդ որում, արդյունաբերական արտադրանքի իրացումը հանրապետությունից դուրս կազմել է իրացման 34.5%-ը՝ 7.7 տոկոսային կետով բարելավելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Արդյունաբերական արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված էր հանքագործական արդյունաբերության և մշակող արդյունաբերության համապատասխանաբար 28.9% և 10.8% աճերով: Հանքագործական արդյունաբերության աճին նպաստել են համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացումը և արտաքին պահանջարկի վերականգնումը: Մշակող արդյունաբերության ոլորտում նշանակալի են ոսկերչական արտադրատեսակների արտադրության 30.4%, քիմիական արդյունաբերության՝ 27.8%, ինչպես նաև հագուստի արտադրության 22.2% աճերը: Ընդ որում, այս ենթաճյուղի աճին ամենամեծ նպաստումն են ունեցել սննդամթերքի արտադրությունը, մետաղագործությունը և շինանյութերի արդյունաբերությունը, որը վկայությունն է բնակչության տնօրինվող եկամտի բարելավման, շինարարության փոքր-ինչ աշխուժացման և հանքահումքային արտադրատեսակների նկատմամբ համաշխարհային պահանջարկի վերականգնման:

Ջրամատակարարման, կոյուղու և թափոնների մշակման ճյուղում ևս արձանագրվել է 6.8% իրական աճ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրության իրական ծավալն արժեքային արտահայտությամբ նվազել է 5%-ով, որը, սակայն, ուղեկցվել է ճյուղի բնեղեն արտադրության ցուցանիշի 19.4% աճով:

Գյուղատնտեսություն: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ նվազել է 17.7%-ով, ընդ որում, բուսաբուծությունը նվազել է 25.6%-ով, անասնաբուծությունը՝ 2.4%-ով և ձկնորսությունը՝ 8.2%-ով: Բուսաբուծության անկումը կրել է տարվա առաջին ամիսներին անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությունը:

Անասնաբուծությունում անկումը պայմանավորված է գերազանցապես սպանդի համար իրացված անասունի և թռչնի ու կաթի արտադրության համապատասխանաբար 10.9% և 2.9% նվազմամբ, որը մասամբ լրացվել է ձվի արտադրության 23.5% աճով: Անտառային տնտեսության ենթաճյուղում համախառն արտադրանքի աննշան՝ 0.1% աճ է արձանագրվել, որը պայմանավորված էր


անտառաբուծությունում և փայտամթերումների ոլորտում մատուցված ծառայությունների 18.9 և 12.5 տոկոս աճով:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները 2010 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել են շուրջ 356.4 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 5.2%-ով: Իրականացված կապիտալ շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների) կառուցվածքում կազմակերպությունների և պետական բյուջեի միջոցները կազմել են համապատասխանաբար 46.4 և 15.0 տոկոս, որոնց հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 32.6 և 5.0 տոկոսով: Փոխարենը էապես նվազել են միջազգային վարկերի (իրական անկումը կազմել է 36%) միջոցների հաշվին իրականացված շինարարության կշիռները՝ կազմելով ընդհանուր շինարարության 12.5%-ը: Շարունակում են անկում ապրել նախորդ տարվանից սկսված բնակչության կողմից⁴ ֆինանսավորվող շինարարության ծավալները: Մասնավորապես, իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 18.2%՝ իրական արտահայտությամբ նվազելով 48.1%-ով:

Շինարարության հիմնական միջոցները (ըստ տնտեսության ճյուղերի) գերազանցապես ուղղվել են անշարժ գույքի հետ կապված գործառնություններին և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու մատակարարմանը, որոնց բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների համապատասխանաբար 27.9 և 13.9 տոկոս: Կապիտալ շինարարության մեջ աճել են նաև տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության տեսակարար կշիռները՝ վկայելով շինարարության՝ ըստ տնտեսության ճյուղերի բազմատեսակավորման մասին, որը հետագայում կարող է հիմք հանդիսանալ նշված ճյուղերի ավելացված արժեքների աճի ձևավորման համար (տես Գծապատկեր 2):

⁴ Բնակչության կողմից ֆինանսավորվող շինարարությունը հիմնականում գնում է ոչ արտադրական ոլորտ՝ անհատական բնակարանաին շինարարություն:

Գծապատկեր 2. 2009 և 2010 թվականների հունվար-սեպտեմբերին շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



Ծառայություններ և առևտուր: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 7.4%-ով: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տեղեկատվության և կապի (25.0%), տրանսպորտի (21.7%) ծառայությունները, ֆինանսական և ապահովագրական գործունեության (20.7%), ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական (6.2%) և կրթության (5.1%) ծառայությունները:

2010 թվականի հունվար-սեպտեմբերին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 1170.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 4.5%-ով: Ընդ որում, մանրածախ առևտուրն աճել է 0.4%-ով, մեծածախ և ավտոմեքենաների առևտուրը՝ համապատասխանաբար 12.4 և 17.7 տոկոսով՝ վկայելով տնտեսական աշխուժացման մասին: Չնայած առևտրի շրջանառության մեջ մանրածախ առևտուրն ամենամեծ տեսակարար կշիռն ունի, սակայն առևտրի շրջանառության աճին ամենամեծ նպաստումն է ունեցել մեծածախ առևտրի աճը:

Տրանսպորտ և կապ: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2009 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 7.1%-ով: Բեռնափոխադրումների ծավալն ըստ օդային, երկաթուղային, ավտոմոբիլային և

մայրուղային խողովակաշարային տրանսպորտի տեսակների աճել է համապատասխանաբար 13.2, 5.6 և 0.7 տոկոսով: Օդային բեռնափոխադրումների ծավալը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.6%-ով: Երկաթուղային տրանսպորտում բեռնափոխադրումների ծավալի աճը նկատվել է ըստ բեռների գրեթե բոլոր խմբերի, բացառությամբ ցեմենտի և սև մետաղների ջարդոնի: Սակայն երկաթուղային տրանսպորտում աճը զուգակցվել է արտահանվող բեռնափոխադրումների տեսակարար կշռի նվազմամբ:

2010 թվականի հունվար-սեպտեմբերի ընթացքում կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համադրելի գներով աճել է 2.2%-ով: Կապի ոլորտում աճը հիմնականում տեղի է ունեցել հեռահաղորդակցության ծառայությունների (բջջային և ինտերնետ հասանելիության ծառայություններ) 1% և հեռուստածրագրերի կազմման ու հեռարձակման ծառայությունների 80% աճի հաշվին:

Գներ և սակագներ: 2010 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 4.7% գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.4% (նպաստումը գնաճին՝ 2.9 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 3.1% (նպաստումը գնաճին՝ 0.5 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 4.4% (նպաստումը գնաճին՝ 1.3 տոկոսային կետ) աճով:

2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում բարձր գնաճային միջավայրի ձևավորման պատճառ են դարձել առավելապես գյուղատնտեսության ճյուղի խորը անկումը և միջազգային շուկաներում ցորենի գնի կտրուկ աճը: Այդ գործոնները եռամսյակի վերջին արձանագրված գնաճի ցուցանիշում արտացոլվել են հետևյալ համամասնություններով. 12-ամսյա 8.6% գնաճի 3.3 տոկոսային կետը ձևավորվել է <<Միրգ>>, <<Բանջարեղեն և կարտոֆիլ>> և 1.5 տոկոսային կետը՝ <<Հացամթերք>> ապրանքախմբերում գների աճի հետևանքով:

2010 թվականի սեպտեմբերին միջին գնաճը կազմել է 7.8%, որը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 7% աճով, ոչ պարենային ապրանքների գների՝ 11.1% և ծառայությունների սակագների 7.5% աճով:

Աշխատանքի շուկա: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նակտմամբ աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 7.1% (84.2 հազ.մարդ): Չնայած դրան, ընթացիկ տարվա փետրվար ամսից սկսած աճը կանգ է առել և ապրիլ ամսից սկսել է նվազել՝ նկատելի դարձնելով գործազրկության մակարդակի նվազման միտումը: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին զբաղվածների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված տնտեսության աշխուժացմամբ, աճել է 1.1%-ով՝ կազմելով 1103.1 հազ. մարդ:

2010 թվականի հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 7.9%-ով, ինչը պայմանավորված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աշխուժացմամբ (բացառությամբ գյուղատնտեսության): Նախորդ տարվա ընթացքում, պայմանավորված կառավարության ընդլայնողական քաղաքականությամբ, բյուջետային հատվածի աշխատավարձի աճն առաջանցիկ է եղել մասնավոր հատվածի նկատմամբ, մինչդեռ 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ոչ պետական հատվածի աշխատավարձի աճը (9.3%) գերազանցել է պետական հատվածում աշխատավարձի աճը (4.2%): 2010 թվականի հունվար-սեպտեմբերին իրական աշխատավարձը 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին անվանական աշխատավարձը կազմել է համապատասխանաբար 85184 դրամ և 133382 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 106048 դրամ:

ՀՆԱ-ի 2.8% աճի պայմաններում զբաղվածության աճը կազմել է 1.1%, որը վկայում է 2010 թվականի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատանքի արտադրողականության⁵ աճի մասին (2.6%):


Արտաքին հատված: Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության քաղաքականությունն արտահանման խթանման ուղղությամբ տվեց իր դրական արդյունքները՝ տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ձևավորվել է ավելի արագ, քան սպասվում էր: Արտաքին պահանջարկի աճի հետ

⁵ ընթացիկ և նախորդ ժամանակահատվածում մեկ զբաղվածին ընկնող ՀՆԱ-ի հարաբերակցություն:

մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

Արտաքին առևտուր: 2010 թվականի առաջին ինն ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տես Գծապատկեր 3) կազմել է 1973.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 215.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 12.3%-ով:

Գծապատկեր 3. Առևտրի հաշվեկշռի դինամիկան հունվար-սեպտեմբեր ամիսներին (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին առևտրի հաշվեկշռը՝ արտահանումը և ներմուծումը հաշվարկած ՖՕԲ գներով, 2010 թվականի ինն ամիսներին կազմել է 1560.8 մլն դոլար, կամ ՀՆԱ-ի 24.7%-ը՝ նախորդ տարվա 23.4%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանման կշիռը (միջին հակումը) 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 11.2% (2009 թվականին՝ 8.2%): Ապրանքների ներմուծումը կազմել է 2010 թվականի ինն ամիսների ՀՆԱ-ի 42.4%-ը՝ նախորդ տարվա 37.7%-ի դիմաց:

*Արտաքին ապրանքաշրջանառությունը*⁶ տարվա ինն ամիսների արդյունքներով կազմել է 3383.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 23.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել

⁶ Արտահանումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:

դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 43.9%-ով՝ կազմելով 705.3 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ 19.2%-ով և կազմել է 2678.4 մլն դոլար:

Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում ինչպես բնակչության տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տնտեսության վերականգմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր, այդ թվում՝ նաև ներդրումային բնույթի ապրանքների գծով. ընդհանուր ներմուծման մեջ <<Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ>>, <<Սարքեր և ապարատներ>> և <<Տարբեր արդյունաբերական ապրանքներ>> ապրանքախմբերի տեսակակար կշիռը կազմել է 21.3%, որոնց աճը 3.3 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին: Ընդ որում, ամենաբարձր՝ 4.5 տոկոսային կետը պայմանավորվել է <<Հանքահումքային արտադրանք>>, 2.6 տոկոսային կետը՝ <<Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ>>, 2.5 տոկոսային կետը՝ <<Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ>> և 2.1 տոկոսային կետը՝ <<Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր>> ապրանքախմբերի ներմուծման աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 28.2, 31.5, 14.3 և 70.0 տոկոս:


Արդաահանում: Տնտեսության արտահանման ոլորտում << կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունքները, զուգորդվելով հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, արդեն իսկ 2009 թվականի երրորդ եռամսյակից արտահայտվեցին արտահանման որոշակի աշխուժացման և ծավալների աստիճանական վերականգնման տեսքով, իսկ ընթացիկ տարվա առաջին ամիսներին ամրապնդեցին արտահանման նշված ձեռքբերումները:

2010 թվականի ինն ամիսների արդյունքներով արտահանման 43.9% աճի ամենաբարձր՝ 22.0 տոկոսային կետը պայմանավորվել է <<Հանքահումքային արտադրանք>> ապրանքախմբի արտահանման 2.1 անգամ ավելացմամբ: Արտահանման աճի 15.2 տոկոսային կետը պայմանավորվել է <<Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր>>, 5.2 տոկոսային կետը՝ <<Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր>> և 4.0 տոկոսային կետը՝ <<Պատրաստի սննդի արտադրանք>> ապրանքախմբերի

ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 45.6, 35.8 և 31.0 տոկոս:

*Նորմալացված առևտրային հաշվեկշռ*⁷: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը 1997 թվականի ինն ամիսների -0.6-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2002-2005 թվականներին պահպանելով -0.3 մակարդակը, այնուհետև ցուցաբերել է վատթարացման միտում՝ ընթացիկ տարվա ինն ամիսներին գրեթե հավասարվելով 1997 թվականի նշված ցուցանիշին: 2006-ից 2008 թվականների ընթացքում նորմալացված հաշվեկշռի նման վարքագիծը պայմանավորված էր արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ տնտեսությունում սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժևորվող փոխարժեքի արդյունք է: 2009 թվականին նորմալացված հաշվեկշռի գործակիցը կազմել է -0.64՝ հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ անկմամբ: 2010 թվականի հունվար-սեպտեմբերին, արտահանման դոլարային արտահայտությամբ առաջանցիկ աճով պայմանավորված, այդ ցուցանիշը կազմել է -0.58՝ ցուցաբերելով որոշակի բարելավում նախորդի համեմատ:


Գծապատկեր 4. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը (հունվար-սեպտեմբեր ամիսներ)



⁷ Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս, թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:

Ներմուծման ծածկման գործակից: 2010 թվականի առաջին ինն ամիսների ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 5 տոկոսային կետով. ընթացիկ տարվա ինն ամիսների արդյունքներով արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 31.1%-ը (տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. 1996-2010 թվականների ներմուծման ծածկման գործակիցը⁸, տոկոսներով (հունվար-սեպտեմբեր ամիսներ)



Ներճյուղային առևտուր: 2010 թվականի անցած ամիսների ՀՀ ներճյուղային⁹ առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին:


Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Արվեստի ստեղծագործություններ» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբի

⁸ Ներմուծման ծածկման գործակիցը՝ ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ծառայությունների մասին տեղեկատվության բացակայության պատճառով, բոլոր տարիների համար հաշվարկված է որպես ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

⁹ Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

Գծապատկեր 6. 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ներճուղային առևտուրը



Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2010 թվականի հունվար-սեպտեմբերի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 27.9%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 32.1%-ը՝ ԵՄ երկրներին: 2009 թվականին համապատասխան ցուցանիշները կազմել են 29.8 և 30.7 տոկոս: ԱՊՀ երկրների համեմատ ԵՄ երկրների ՀՀ ապրանքաշրջանառության աճը տարեսկզբից առաջանցիկ է և ընթացիկ տարվա ինն ամիսներին նախորդ տարվա համեմատ կազմել է 29.1%, իսկ ԱՊՀ երկրների արտաքին առևտրաշրջանառության աճը կազմել է 15.4%: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված են Չինաստանը (առևտրաշրջանառության 9.4%), Գերմանիան (7.2%), Բուլղարիան (5.6%), Իրանը (5.3%), ԱՄՆ-ն (4.3%), Թուրքիան (4.2%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (20.8%) և Ուկրաինան (4.9%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ինն ամիսների ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 92%-ը:

Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:


Փոխարժեք: Նախորդ տարվա և 2010 թվականի տարեսկզբի ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2010 թվականի երկրորդ եռամսյակից փոփոխվել են, և դրսևորվել է փոխարժեքի դանդաղ արժևորում: Ընդ որում, եթե 2010 թվականի առաջին եռամսյակում միջին փոխարժեքը կազմել է 384.08 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և արժեզրկվել է 15.2%-ով, ապա տարվա ինն ամիսներին այն կազմել է՝ 377.97 (2009-ին՝ 356.24), և նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է 5.7% արժեզրկում:

ՀՀ ազգային արժույթը՝ ոչ միայն դոլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք¹⁰), ընթացիկ տարվա առաջին ութ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 8.0%-ով, ինչը նշանակում է, որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները դրամի նկատմամբ ավելի շատ են արժևորվել: Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի միջին արժեզրկումը տարվա առաջին ութ ամիսների ընթացքում կազմել է 4.8%¹¹, ինչն իր դրական ազդեցությունն է թողնում երկրի ընթացիկ հաշվի վրա:

¹⁰ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

¹¹ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2010թ. հոկտեմբերի 5-ի դրությամբ տվյալները:

Գծապատկեր 7. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների¹² միջին շարժընթացը 2009 թվականին և 2010 թվականի հունվար-օգոստոսին



Ֆինանսական շուկա: 2010 թվականի սեպտեմբեր ամսին փողի բազան կազմել է 438.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 5%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 18.8%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 90.3%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 7.9%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 69.3%), իսկ պարտադիր պահուստները¹³ դրամով և արտարժույթով, նվազել են 25.9%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 30%):

2010 թվականի սեպտեմբեր ամսին փողի զանգվածը կազմել է 810.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 8.9%-ով: Ընդ որում, զուտ ներքին ակտիվներն աճել են 47.1%-ով, իսկ զուտ արտաքին ակտիվները նվազել են 31.8%-ով:

¹² Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը անվանական արդյունավետ փոխարժեքն է ճշտված գներով և հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը և կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տենդենցների կողմնորոշիչ հետևություններ անելու համար: Բացի դրանից, այն հիմնական ցուցանիշն է, որը բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր և գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

¹³ Բանկերի պարտադիր պահուստավորման մեջ ներառվում են ոչ միայն ԿԲ-ի կողմից սահմանված նորմաներին համապատասխանող պարտադիր պահուստավորման միջոցները, այլ բանկերի կողմից ոչ պարտադիր պահուստավորմամբ պայմանավորված ավելցուկային միջոցները:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը և դրամային ավանդներն ապահովել են փողի զանգվածի աճի համապատասխանաբար 2.4 և 2.5 տոկոսային կետը, իսկ արտարժույթային ավանդները՝ 4 տոկոսային կետը¹⁴:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2010 թվականի սեպտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 1.3%-ով: Չնայած նշված ժամանակահատվածում տնտեսության դուլարացման մակարդակը դեռևս բարձր է, 2010 թվականի սեպտեմբերին հունիսի համեմատ արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը ներգրավված ավանդներում նվազել է 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 70.9%¹⁵: Նշվածը պայմանավորվել է ԿԲ և կառավարության կողմից ապադոլարայնացման միջոցառումների իրականացմամբ:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2010 թվականի սեպտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 24.9%-ով¹⁶ (նշենք, որ վարկերի 56.2%-ը կազմում են արտարժույթով վարկերը): Արտարժույթով վարկավորման ծավալներն էապես գերազանցել են դրամով վարկավորման ծավալները. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրամով վարկավորումն ավելացել է 15.1%-ով, մինչդեռ արտարժույթով վարկավորման աճը կազմել է 33.8%:

Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2010 թվականի սեպտեմբերին կազմել են 18.78%՝ 2009 թվականի սեպտեմբերի 18.35%-ի համեմատ (սակայն 2010 թվականի օգոստոսի նկատմամբ նվազել են 0.46 տոկոսային կետով): Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2009 թվականի սեպտեմբերին ավանդների տոկոսադրույքը կազմել է 8.34%, ապա 2010 թվականի սեպտեմբերին այն աճել է 0.6 տոկոսային կետով և կազմել 8.94%:

¹⁴ Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

¹⁵ 2010 թվականի մարտին արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը ներգրավված ավանդներում կազմում էր 77 տոկոս:

¹⁶ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

2010 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2009 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 9.49%, ապա 2010 թվականի երրորդ եռամսյակում այն կազմել է 12.18%: Սակայն 2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում երկրորդ եռամսյակի նկատմամբ նկատվել է տոկոսադրույքների անկում 13.19%-ից 12.18%: Եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 36.862 մլրդ դրամ, իսկ միջին ժամկետայնությունը՝ 1196 օր: 2010 թվականի երրորդ եռամսյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.66 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.88:

ՀՀ կենտրոնական բանկը 2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում չի փոփոխել ռեպո տոկոսադրույքը՝ պահպանելով այն 7.25% մակարդակում:

Աղյուսակ 2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2010 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Առևտրային բանկերի վարկեր *	19.07	19.88	19.10	19.94	20.02	18.66	18.32	19.24	18.78
Առևտրային բանկերի ավանդներ*	7.79	8.56	8.54	9.08	9.73	9.17	9.53	9.45	8.94
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	5.5	6.0	6.5	7.0	7.25	7.25	7.25	7.25	7.25

* Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

Հարկաբյուջետային հատված: Տարվա ընթացքում իրականացվող բյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված. մի կողմից նպատակ է դրվել չհակազդել տնտեսական վերականգնմանը, մյուս կողմից նպատակադրվել է մեղմել գնաճային ռիսկերը, զուգահեռաբար ապահովելով արդյունավետ պարտքի կառավարում և պակասուրդի աստիճանական կրճատում:


Տարվա առաջին ինն ամիսների արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 24.4%ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

22.7%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 22%-ը՝ նախորդ տարվա 21%-ի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 20.5%, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները՝ 18%, ընդ որում, աճ է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների հավաքագրման գծով, բացառությամբ շահութահարկի, հաստատագրված վճարի և հողի հարկի:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2010 թվականի ինն ամիսների արդյունքներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրսևորել է նվազման միտում՝ 2.2 տոկոսային կետի չափով, և կազմել 27.7%: Ընթացիկ ծախսերի մասով գրանցվել է 6.8% անվանական աճ, սակայն ՀՆԱ-ի նկատմամբ արձանագրվել է անկում. ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22.7%՝ նախորդ տարվա 23.9%-ի դիմաց:

Հարկաբյուջետային ազդակը: 2009 թվականի ողջ ժամանակատվածում գրանցված ընդլայնող հարկաբյուջետային ազդակի դիմաց 2010 թվականի առաջին ինն ամիսների արդյունքներով գրանցվել է չեզոք հարկաբյուջետային ազդակ, ընդ որում եկամուտների գծով գրանցվել են 1.3% զսպող, իսկ ծախսերի գծով՝ 0.8% ընդլայնող ազդակներ: Կապիտալ ծախսերը 2010 թվականի առաջին ինն ամիսներին կազմել են ՀՆԱ-ի 5%-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5.9%-ի փոխարեն:


Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2008 թվականից եռամսյակներով



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ


ՀՀ կառավարության ծրագրով 2010 թվականի ինն ամիսների ընթացքում նախատեսվել էր շուրջ 524.2 մլրդ դրամ բյուջետային եկամուտների ստացում: Հաշվի առնելով <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ ՀՀ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային միջոցները և ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվող ծախսերի դիմաց ստացվող միջոցները: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների իննամսյա ծրագիրը կազմել է շուրջ 541.1 մլրդ դրամ, որի դիմաց ստացվել են 581.2 մլրդ դրամի փաստացի եկամուտներ կամ կանխատեսվածից 7.4%-ով ավելի: Ընդ որում, հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև այլ եկամուտների գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում՝ համապատասխանաբար 9.4%-ով և 18.9%-ով: Պաշտոնական դրամաշնորհները նույն ժամանակահատվածում 34.8%-ով զիջել են ծրագրված ցուցանիշը: 2009 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 20.5%-ով կամ 98.9 մլրդ դրամով: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները), պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 18, 104.6 և 30.7 տոկոսով: Ընդ որում, բյուջետային եկամուտների աճն առավելապես ապահովվել է հարկային եկամուտների հաշվին:

Գծապատկեր 9. ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2009-2010թթ.



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 0.5 և 1.4 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 6.1 և 3.5 տոկոս: Իսկ հարկային եկամուտների, պետական տուրքերի ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռը նվազել է 1.9 տոկոսային կետով և կազմել 90.4%: Բյուջեի եկամուտների կառուցվածքի նշված փոփոխությունը պայմանավորված է հարկային եկամուտների նկատմամբ պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների առաջանցիկ աճով:

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ

2010 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 426.7 մլրդ դրամ հարկային եկամուտներ՝ 9.7%-ով գերազանցելով կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 19.4%-ով կամ 69.2 մլրդ դրամով: Ընդ որում, հարկատեսակների մեծամասնության գծով արձանագրվել է մուտքերի աճ, և աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ավելացված արժեքի հարկը, եկամտահարկը և մաքսատուրքը:

Հարկային եկամուտների 52.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է ավելի քան 223 մլրդ դրամ և 27.3%-ով կամ 47.8 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 142 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 81 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ մուտքերի աճ է արձանագրվել ինչպես ՀՀ սահմանին հարկումից, այնպես էլ ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպը:

Պետական բյուջեի հարկերի 8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 34.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 24 մլրդ դրամ, որից 10.7 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 9.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 10.1 մլրդ դրամ, որից 5.1 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 10.9%-ով կամ 3.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի մուտքերի 16.1% աճով: «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ սահմանվել է, որ ակցիզային հարկ վճարող անձանց, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝

շալցված ապրանքների և 2208 ապրանքախմբի ծածկագրին դասվող ապրանքների օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3500 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. հունվարի 1-ից):

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների 13.9%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 59.3 մլրդ դրամ և 6%-ով կամ 3.8 մլրդ դրամով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Շահութահարկի մուտքերի անկումը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ տնտեսավարողները 2010 թվականի շահութահարկի կանխավճարները վճարում են՝ հիմք ընդունելով 2009 թվականի շահութահարկի ցուցանիշները: «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվել ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացած շահաբաժինների՝ 0 տոկոս դրույքաչափով հարկման վերաբերյալ դրույթը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերի 5-ից):

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում տեղի է ունեցել լրացում, որի համաձայն թանկարժեք քարերի իրացման, ոսկերչական իրերի արտադրության և իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման համար սահմանվել են նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. մարտի 25-ից):

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է շուրջ 54.6 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 12.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 28.7%-ով կամ 12.2 մլրդ դրամով: «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածում կատարվել է լրացում, որի համաձայն համախառն եկամտից նվազեցվում են գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. ապրիլի 23-ից):

Հաշվետու ժամանակահատվածում մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են շուրջ 22.8 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 5.3%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մաքսատուրքից մուտքերն աճել են 28.6%-ով կամ 5.1 մլրդ դրամով:

Գործունեության առանձին տեսակներից անցած ինն ամիսների ընթացքում գանձվել են շուրջ 16.9 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ 4.8%-ով կամ 859.2 մլն դրամով զիջելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալի անկում է արձանագրվել առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 6.8 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որից 2.8 մլրդ դրամը մուտքագրվել է օգտակար հանածոների արդյունահանման համար, 1.6 մլրդ դրամը՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, 1.2 մլրդ դրամը՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: Հիմնականում նշված երեք վճարների գծով արձանագրված մուտքերի աճի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնօգտագործման և բնապահպանական վճարներն ավելացել են 79.7%-ով կամ 3 մլրդ դրամով:

2010 թվականի հաշվետու ժամանակահատվածում 9.3 մլրդ դրամ պետական բյուջե է մուտքագրվել այլ հարկերից: Մասնավորապես՝ 3.3 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ոռոյալթին, 2.5 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.4 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 1.1 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները, 813.6 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 172.7 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 14.4 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների

կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 36.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոռոգման գծով մուտքերի աճով:

Պետական տուրք

2010 թվականի ինն ամիսների ընթացքում պետական տուրքի գծով բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 14.5 մլրդ դրամ՝ ապահովելով կառավարության ծրագրով կանխատեսված ցուցանիշի 96.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների և պետական գրանցման համար գանձված տուրքերի համեմատաբար ցածր կատարողականով՝ համապատասխանաբար 83% և 84.5%: Ծրագրի գերազանցում է արձանագրվել ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման (97.3%-ով), գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նմուշների, ապրանքների ծագման, տեղանունների, ֆիրմային անվանումների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության (15%-ով), մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու (11.9%-ով), դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճարելի բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու (7.1%-ով), լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու (5.1%-ով) համար գանձվող տուրքերի գծով:

2009 թվականի ինն ամիսների համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 6.6%-ով կամ 890.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի աճով:

<<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ դադարել են գործել հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի, ինչպես նաև բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի) իրականացման համար սահմանված բազային տուրքի 25-ապատիկից մինչև 300-ապատիկի չափով պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունվարից): <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման թույլտվություն տալու համար բազային տուրքի 20-ապատակի չափով սահմանված պետական տուրքի փոխարեն սահմանվել են երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար՝ բազային տուրքի 20-ապատակի չափով, իսկ վերոնշյալ գործունեության արդյունքների փոխանցման ընդհանուր թույլտվություն տալու համար՝ բազային տուրքի 30-ապատակի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի մայիսի 15-ից):

Օրենքի մեկ այլ փոփոխությամբ լիցենզիայի մեկից ավելի յուրաքանչյուր հաջորդ ներդիրի կամ կորցրած ներդիրի կրկնօրինակը տալու համար սահմանված տուրքերի փոխարեն սահմանվել է լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը տալու համար պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 11-ից):

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են 84.2 մլրդ դրամ, որից շուրջ 70.1 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 11.6 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 2.5 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: Պարտադիր սոցիալական ապահովության վճարները 10.5%-ով (8 մլրդ դրամով) գերազանցել են ինն ամսվա ծրագիրը և 13.6%-ով (10.1 մլրդ դրամով)՝ 2009 թվականի նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը: Նշենք,

որ մուտքերի աճի մեջ 8.2 մլրդ դրամը բաժին է ընկել գործատուների կողմից վճարվող գումարներին՝ պայմանավորված վերջինիս բարձր տեսակարար կշռով, սակայն առավելագույն տոկոսային աճ է գրանցվել աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից կատարված վճարումների գծով, որը կազմել է 15.2%:

Պաշտոնական դրամաշնորհներ

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արտաքին դոնորների կողմից ՀՀ պետական բյուջեին տրամադրվել են 20.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով ինն ամսվա ծրագրի 65.2%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է հետևյալով. 10.5 մլրդ դրամով պակաս միջոցներ են օգտագործվել նպատակային ծրագրերի շրջանակներում, որից 6 մլրդ դրամը՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրված միջոցների ընդամենը 67.7%-ը: Բացի այդ, թվով 8 նպատակային ծրագրերի գծով միջոցներ չեն օգտագործվել՝ շուրջ 2.3 մլրդ դրամ ընդհանուր գումարով, և 829.6 մլն դրամով պակաս է օգտագործվել արտաբյուջետային հաշիվներով շրջանառվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 14.5 մլրդ դրամ, որից ավելի քան 12.5 մլրդ դրամը՝ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի, 1.2 մլրդ դրամը (նախատեսվածի 49.4%-ը)՝ Համաշխարհային բանկի, 629.2 մլն դրամը (նախատեսվածի 23.7%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 172.5 մլն դրամը (նախատեսվածի 15.8%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում: Անցած ինն ամիսների ընթացքում ևս 2.2 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.9 մլրդ դրամ էր նախատեսվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, որի դիմաց փաստացի ստացվել է 3.4 մլրդ դրամ, որն ուղղվել է Հայաստանում կրթական ոլորտի բարեփոխումներին աջակցությանը: 285.6 մլն դրամ

է ստացվել <<Պարենային արտադրության աճ>> ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից՝ նախատեսված 345 մլն դրամի փոխարեն:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն ունեցել են կրկնակի աճ, որը կազմել է 10.5 մլրդ դրամ և հիմնականում պայմանավորված է <<Հազարամյակի մարտահրավեր>> ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցների աճով:

Այլ եկամուտներ

Պետական բյուջեի այլ եկամուտները 2010 թվականի ինն ամիսների ընթացքում կազմել են 35.5 մլրդ դրամ և ապահովել 118.9% կատարողական: Նշված գումարից 10.9 մլրդ դրամը պետական մարմինների արտաբյուջետային միջոցներն են, որոնք ապահովել են ծրագրի 96.5%-ը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների ծրագրի գերազանցմամբ: Նշված եկամուտները կազմել են շուրջ 11.2 մլրդ դրամ կամ ծրագրվածից 88.9%-ով ավելի: Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները կազմել են 509.9 մլն դրամ՝ 15.9%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Մասնավորապես՝ 11.5%-ով կամ 45.2 մլն դրամով ծրագրի գերազանցում է արձանագրվել ձեռնարկությունների և գույքի վարձակալության վարձավճարների գծով, 2.2 անգամ կամ 39.7 մլն դրամով՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների գծով, իսկ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարների գծով նախատեսված 15 մլն դրամի դիմաց փաստացի մուտքեր չեն ստացվել: Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 537.4 մլն դրամ և 18%-ով գերազանցել ծրագրային ցուցանիշը: Ծրագրվածի 97.1%-ի չափով մուտքեր են ստացվել պետության տված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսների գծով, որոնք կազմել են շուրջ 4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի

օգտագործման տոկոսավճարները կազմել են շուրջ 201.7 մլն դրամ՝ նախատեսված 159.1 մլն դրամի դիմաց: Նշված գումարը վճարվել է Վրաստանի կողմից՝ Հայաստանի նկատմամբ ունեցած միջպետական վարկի գծով պարտավորությունների դիմաց, որից 42.5 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են 3.8 մլրդ դրամ՝ նախատեսված շուրջ 4 մլրդ դրամի դիմաց: Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցները կազմել են 83.1 մլն դրամ և գրեթե 2.3 անգամ գերազանցել ծրագիրը: Եվս 4.4 մլրդ դրամ (նախատեսվածից 9.6%-ով ավելի) պետական բյուջե է մուտքագրվել իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից: Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները կազմել են 14.7 մլրդ դրամ՝ նախատեսված 14.8 մլրդ դրամի դիմաց:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 30.7%-ով կամ 8.3 մլրդ դրամով: Մասնավորապես՝ բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներն աճել են 6 մլրդ դրամով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները՝ 3 մլրդ դրամով: Փոխարենը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները նվազել են 1.1 մլրդ դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2009 թվականի նույն ժամանակահատվածում շուրջ 2.1 մլրդ դրամ էր վճարվել ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից:

«ՎՈՒՄՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ»

«Վ կառավարության ծրագրով 2010 թվականի ինն ամիսներին նախատեսվել էր պետական բյուջեից 689.1 մլրդ դրամ ծախսերի կատարում: Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ՀՀ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային միջոցները և ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվող ծախսերը, ինչպես նաև կիրառելով պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունները՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի իննամսյա ծրագիրը ճշտվել է՝ կազմելով 716.4 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 660 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերի իննամսյա ծրագիրը կատարվել է 92.1%-ով, ընդ որում, շեղումների ընդհանուր գումարի 63.9%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում նոր բյուջետային պարտքեր չեն կուտակվել, և նախատեսված հատկացումների սահմաններում պետական մարմինների ստանձնած պարտավորությունները, որոնց համար սահմանված կարգով ներկայացվել են ֆինանսավորման հայտեր, ամբողջությամբ և ժամանակին ֆինանսավորվել են: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 4.2%-ով կամ 26.7 մլրդ դրամով: Ծախսերի աճը գրանցվել է հիմնականում պետական պարտքի սպասարկման ծախսերի, ընթացիկ դրամաշնորհների, շենքերի ու շինությունների ձեռքբերման և շինարարության ծախսերի աճի, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազման արդյունքում: Միևնույն ժամանակ, զգալի անկում է արձանագրվել շենքերի ու շինությունների կապիտալ վերանորոգման և մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման, պահպանման ու հիմնանորոգման ծախսերում:

Հաշվետու ժամանակահատվածում 541.8 մլրդ դրամ է տրամադրվել ընթացիկ ծախսերին, որոնց իննամսյա ծրագիրը կատարվել է 93.8%-ով: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով կամ 34.4 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 49.9 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների

աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 94.1%-ը և 5.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շուրջ 3.5 մլրդ դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին՝ կազմելով նախատեսվածի 90.9%-ը և 6%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2010 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից օգտագործվել է ավելի քան 108.7 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 93.7%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 22.1 մլրդ դրամ ուղղվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով իննամսյա ծրագրի 91.7%-ը: Մասնավորապես՝ շուրջ 13.4 մլրդ դրամ (93.5%) տրամադրվել է ներքին, 8.7 մլրդ դրամ (89.2%)՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 125.9%-ով, ընդ որում, աճ է արձանագրվել և ներքին, և արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերում:

Անցած ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 12.9 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից 12 մլրդ դրամը տրամադրվել է պետական, 843.5 մլն դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Սուբսիդավորման իննամսյա ծրագիրը կատարվել է 95.4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 4.6%-ով կամ 626.8 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել են 66.1 մլրդ դրամի դրամաշնորհներ՝ ապահովելով 97.3% կատարողական: Նշված գումարից 61 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 1 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին՝ որպես անդամակցության վճարներ, 116.8 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները կազմել են 24.3 մլրդ դրամ, որոնք ֆինանսավորվել են 100%-ով: Շուրջ 4 մլրդ դրամի կապիտալ դրամաշնորհներ են տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին՝ կազմելով ծրագրի 95.3%-ը: 2009 թվականի ինն ամիսների համեմատ դրամաշնորհների գծով պետական բյուջեի ծախսերն ավելացել են 19.9%-ով կամ շուրջ 11 մլրդ դրամով, ինչը

հիմնականում պայմանավորված է պետական հատվածի այլ մակարդակներին հատկացված դրամաշնորհների գծով ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.2%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են շուրջ 180.1 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 99.1%-ը: Մասնավորապես՝ 132 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 48 մլրդ դրամ՝ նպաստներին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 99.4%-ը և 98.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների և նպաստների ծախսերն աճել են համապատասխանաբար 0.4%-ով և 4.8%-ով: Մասնավորապես՝ 53.1%-ով ավելացել են հիվանդության և հաշմանդամության, 36.3%-ով՝ մայրության, 20.7%-ով՝ գործազրկության և 48.3%-ով՝ կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստների գծով ծախսերը:

2010 թվականի ինն ամիսներին 98.5 մլրդ դրամ է տրամադրվել այլ ծախսերին՝ կազմելով իննամսյա ծրագրի 83.7%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ ծախսերն աճել են 1.6%-ով կամ շուրջ 1.6 մլրդ դրամով:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 118.2 մլրդ դրամ կամ ծրագրի 85.3%-ը: Շուրջ 119 մլրդ դրամ տրամադրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ կազմելով իննամսյա ծրագրի 85.8%-ը: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրից շեղումը արձանագրվել է հիմնականում շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերում: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 11.3%-ով կամ 15.1 մլրդ դրամով, ընդ որում, 7.4%-ով նվազել են շենքերի և շինությունների, 37.9%-ով՝ մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման վրա կատարված ծախսերը, 59.2%-ով՝ նախագծահետազոտական ծախսերը: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից անցած ինն ամիսներին պետական բյուջե է մուտքագրվել 706.5 մլն դրամ՝ կանխատեսված 3.1 մլն դրամի և նախորդ տարվա 8.1 մլրդ դրամի դիմաց:

Գործառական դասակարգում

2010 թվականի ինն ամիսներին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 97.7 մլրդ դրամ՝ 91%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ»», «Պետական պարտքի գծով գործառնություններ» և «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» դասերում: 2009 թվականի ինն ամիսների համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 33.8%-ով կամ 24.7 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման և ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի ավելացմամբ:

Օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 8.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 90.7%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է նշված մարմինների պահպանման, կարողությունների զարգացման և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 25.6 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրված ցուցանիշի 85.8%-ը: Հատկացումների զգալի մասը՝ 14 մլրդ դրամ, ուղղվել է արտահանողներին ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարների վերադարձին, որը կատարվել է 99.9%-ով: Տվյալ խմբում տնտեսումները հիմնականում առաջացել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման ծախսերում, որոնք կատարվել են ընդամենը 37.6%-ով և կազմել 2.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծախսերն աճել են 35.5%-ով կամ 6.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի 80.7% կամ 6.2 մլրդ դրամ աճով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 6.6 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին հարաբերությունների ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 94.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերի ցածր կատարողականով: ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը կազմել են 4.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.8%-ը, արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների ծախսերը կատարվել են 78%-ով և կազմել 249.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաքին հարաբերությունների ծախսերն աճել են 35.7%-ով (1.7 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի 37.7% աճով: Զգալի աճ է արձանագրվել նաև միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարների գծով, որոնք կազմել են 1 մլրդ դրամ և 41.6%-ով կամ 298.1 մլն դրամով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 82.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ խմբում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման, պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության ծախսերի ցածր կատարողականով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների համար նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների դասին տրամադրվել է 222.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 80%-ը: Քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի ցածր կատարողականով պայմանավորված, որը կազմել է 38.7% (20.3 մլն դրամ), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 14%-ով: Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասին

տրամադրվել է 589.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 82.5%-ը: Տվյալ դասում ընդգրկված 4 ծրագրերից 3-ի գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ չեն օգտագործվել, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների գծով նախատեսված 55 մլն դրամն ընդհանրապես չի օգտագործվել, ինչի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 8.1%-ով: Ընդհանուր բնույթի այլ ծառայություններին տրամադրվել է շուրջ 412.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 83.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այս դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի ցածր կատարողականով, որը կազմել է 68.8% կամ 152.3 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 2.1%-ով:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներին տրամադրվել է 3.8 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 89.4%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերում, որոնք կազմել են 3.1 մլրդ դրամ կամ 90.9%, ինչպես նաև ԱՄՆ կառավարության աջացությամբ իրականացվող <<Հազարամյակի մարտահրավեր>> դրամաշնորհային ծրագրում, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսված հատկացումների ընդամենը 51.7%-ը կամ 139.1 մլն դրամ: 2009 թվականի ինն ամիսների համեմատ ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքների ծախսերն աճել են 3%-ով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 99.4%-ը: 2009 թվականի ինն ամիսների համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը նվազել են 8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 122.6 մլն դրամ էր հատկացվել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին, որոնք 2010 թվականին չեն նախատեսվել:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է 3.8 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված հատկացումների 72.7%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային և վարկային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի ցածր կատարողականով: ՀԲ աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվել են 951.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 48.8%-ը: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կատարվել են 84%-ով՝ կազմելով 1.5 մլրդ դրամ: Սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վերոնշյալ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերն ավելացել են, ինչի արդյունքում այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի գծով արձանագրվել է 13.2%-ով ավել:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում պետական պարտքի գծով գործառնություններին տրամադրվել է 22.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 91.7%-ը: Տնտեսումն առաջացել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերում: Արտաքին պետական պարտքի սպասարկման նպատակով տրամադրվել է 8.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 89.2%-ը: Տարբերությունը պայմանավորված է միջազգային շուկայում LIBOR տոկոսադրույքի անկմամբ, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ (հիմնականում՝ SDR/USD): 13.1 մլրդ դրամ է տրամադրվել պետական պարտատոմսերի սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 94%-ը: Պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի տնտեսումը պայմանավորված է նախատեսվածից փոքր ծավալով հետգնումների իրականացմամբ (նախատեսված 18 մլրդ դրամի փոխարեն իրականացվել են 13.3 մլրդ դրամի հետգնումներ), ինչպես նաև տոկոսադրույքների բարձրացման պայմաններում ավելի բարձր եկամտաբերությամբ

հետզնումների իրականացմամբ, ինչը պատճառ էր հետզնվող պարտատոմսերի սպասարկման ծախսերի կրճատման: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 125.9%-ով: Ընդ որում, ավելացել են և ներքին, և արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները կազմել են 24.5 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական և 16.6%-ով գերազանցելով 2009 թվականի նույն ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 24.4 մլրդ դրամը կազմել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաները և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը, որոնք կատարվել են 100%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանության բնագավառին հատկացվել է 95.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.6% կատարողական: Մասնավորապես՝ 92.3 մլրդ դրամ հատկացվել է ռազմական պաշտպանությանը, 3 մլրդ դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, 488 մլն դրամ՝ պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներին, 96.4 մլն դրամ՝ արտաքին ռազմական օգնությանը: Նախորդ տարվա համեմատ պաշտպանության ծախսերն աճել են 8%-ով, որը հիմնականում պայմանավորված է ռազմական կարիքների բավարարման ծախսերի աճով:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2010 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 45.3 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 91.2% կատարողական: Ընդ որում, բոլոր հինգ խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց գերակշիռ մասը բաժին է ընկել ոստիկանության, դատարանների և ազգային անվտանգության դասերին:

Նշված բաժնի ծախսերի 69.2%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 6.3%-ը՝ փրկարար ծառայության, 13.4%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 3.7%-ը՝ դատախազության, 7.4%-ը՝ կալանավայրերի ծախսերի ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 31.3 մլրդ դրամ տրամադրվել է հասարակական կարգի և անվտանգության խմբի ծրագրերին՝ ապահովելով 91.1%

կատարողական: Նշված գումարից 23.5 մլրդ դրամ տրամադրվել է ոստիկանությանը, 7.9 մլրդ դրամ՝ ազգային անվտանգությանը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերում: 2009 թվականի ինն ամիսների համեմատ ոստիկանության ծախսերն աճել են 1.1%-ով, իսկ ազգային անվտանգության ծախսերը՝ նվազել 3.6%-ով:

Փրկարար ծառայության ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 2.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.9%-ով կատարում և 2.1%-ով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Դատական գործունեությանը և իրավական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 6.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 85.8%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս շրջանակներում իրականացվող ճապոնական ու հոլանդական դրամաշնորհային ծրագրերի ծախսերի ցածր կատարողականով՝ համապատասխանաբար 77.4% (1.6 մլրդ դրամ), 51.5% (93 մլն դրամ) և 91% (373 մլն դրամ): Ցածր կատարողական է գրանցվել նաև ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ ծրագրում, որը կազմել է 34.5% (27.2 մլն դրամ): 2009 թվականի ինն ամիսների համեմատ դատական գործունեության և իրավական պաշտպանության ծախսերը նվազել են 4.8%-ով՝ հիմնականում պայմանավորված դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս շրջանակներում իրականացվող ճապոնական դրամաշնորհային ծրագրերի, վարչական օբյեկտների շինարարության և ՀՀ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի պահպանման ծախսերի նվազմամբ:

Դատախազության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 1.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 92.2%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ դատախազության պահպանման և վերջինիս պահուստային ֆոնդի ծախսերում: 2009 թվականի ինն ամիսների համեմատ դատախազության խմբի ծախսերն աճել են 3.2%-ով:

Շուրջ 3.4 մլրդ դրամ է տրամադրվել կալանավայրերին՝ կազմելով ծրագրի 98.2%-ը, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 6.2%-ով:

Տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը 2010 թվականի ինն ամիսների ընթացքում կազմել են շուրջ 78.3 մլրդ դրամ և ապահովել իննամսյա ծրագրի 89.7% կատարողական: Ընդ որում, բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ: Առավելագույն կատարողական է գրանցվել <<Վառելիք և էներգետիկա>> խմբում՝ 172.3%, նվազագույնը՝ <<Տրանսպորտ>> խմբում՝ 58.7%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների ծախսերը նվազել են 4.8%-ով կամ 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի, գյուղատնտեսության և վառելիքի գծով կատարված ծախսերի նվազմամբ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է էլեկտրաէներգիայի, հանքային ռեսուրսների արդյունահանման, ոռոգման և զարգացման բազմանպատակ ծրագրերի դասերի ծախսերի աճ:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների ծախսերը կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 79.1%-ը: Խմբում ֆինանսավորվել են թվով տասնմեկ ծրագրեր, որոնցից չորսի գծով արձանագրվել է 100% կատարողական: Իսկ խմբի ծրագրված ցուցանիշից շեղումը մեծ մասամբ պայմանավորված է արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի, <<Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ>>-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերի ցածր կատարողականով, ինչպես նաև Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի համար նախատեսված 160 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով:

Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների խմբի ծախսերն աճել են 13.4%-ով կամ 211.3 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է <<Շանհայ էքսպո-2010>> համաշխարհային ցուցահանդեսին << մասնակցության ծախսերի աճով, ինչպես նաև այն հանգամանքով, որ << 2010 թվականի պետական բյուջեից պետական աջակցություն է հատկացվել Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման նպատակով, որը

նախորդ տարի չէր նախատեսվել: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՓՄՁ սուբյեկտներին աջակցությունը նվազել է 77.1%-ով կամ 353.8 մլն դրամով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության բնագավառներին ուղղվել է շուրջ 28.4 մլրդ դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 83.1%-ը: Իսմբի ծախսերի 17.1%-ը կամ շուրջ 4.9 մլրդ դրամը կազմել են գյուղատնտեսության, 2%-ը կամ 565.9 մլն դրամը՝ անտառային տնտեսության և 80.9%-ը կամ շուրջ 23 մլրդ դրամը՝ ոռոգման ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 82.4, 89.9 և 83.1 տոկոսով: Իսմբի ծախսերի շեղումը ծրագրված ցուցանիշից մեծ մասամբ պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում միջոցների պակաս օգտագործման հանգամանքով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ տվյալ խմբում ծախսերի գերազանցում է ապահովվել ՀԲ աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգնման հրատապ վարկային ծրագրի գծով: Վերջինիս շրջանակներում իրականացվել են 7.4 մլրդ դրամի ծախսեր՝ 30.2%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն ավելացել են 42.6%-ով կամ 8.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոռոգման բնագավառում արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 4.9 մլրդ դրամ են կազմել գյուղատնտեսության ոլորտի ծախսերը՝ կազմելով ծրագրի 82.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման, Դանիական թագավորության և Նավթ արտահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային և դրամաշնորհային ծրագրերի, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման և հակակարկտային կայանքների տեղակայման ծրագրերի ծախսերի ցածր

կատարողականով: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ տվյալ դասում նախատեսվածից վել միջոցներ են օգտագործվել ՀԲ աջակցությամբ իրականացվող գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման և նույն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման, ինչպես նաև թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրերի գծով: Վերջիններիս շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 45.2 մլն դրամ, 101.1 մլն դրամ և 307.2 մլն դրամ՝ 5.1 անգամ, 21.1%-ով և 8.8%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշները: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից իրականացված հատկացումների հաշվին գյուղատնտեսության ոլորտում կատարվել են 24 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են հնգական վարկային և դրամաշնորհային ծրագրեր: Հաշվետու ժամանակահատվածում 82.9 մլն դրամի ծախսեր են կատարվել ՄԱԿ-ի զարգացման աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը 2010 թվականի պետական բյուջեում չի նախատեսվել և ֆինանսավորվել է նախորդ տարի ստացված միջոցների հաշվին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերը նվազել են 44.4%-ով կամ 3.9 մլրդ դրամով: Այն հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում անտառային տնտեսության դասի ծախսերը կազմել են շուրջ 565.9 մլն դրամ և 89.9%-ով ապահովել ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի ու անտառվերականգնման և անտառշինական աշխատանքների գծով կատարված ծախսերի ցածր (համապատասխանաբար 25.8 և 87.9 տոկոս) կատարողականով: Նշված դասում ընդգրկված մյուս երկու ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական. դրանք են՝ անտառպահպանական ծառայությունները և անտառային պետական մոնիթորինգի իրականացումը, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 464.4 մլն դրամ և 35.1 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերը նվազել են 31.4%-ով կամ 259.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է

անտառվերականգման և անտառշինական աշխատանքների գծով կատարված ծախսերի նվազմամբ:

2010 թվականի ինն ամիսներին ոռոգման դասի ծախսերը կազմել են շուրջ 23 մլրդ դրամ և ապահովել իննամսյա ծրագրի 83.1% կատարողական: Ոռոգման ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 10 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող <<Հազարամյակի մարտահրավեր>> դրամաշնորհային ծրագրի (10.7 մլրդ դրամ՝ 65.2%) և Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի (199.9 մլն դրամ՝ 24.2%) շրջանակներում միջոցների պակաս օգտագործմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ տվյալ դասում ծրագրի գերազանցում է արձանագրվել ՀԲ աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգնման հրատապ վարկային ծրագրի գծով, որի շրջանակներում օգտագործվել է շուրջ 7.4 մլրդ դրամ՝ նախատեսված 5.6 մլրդ դրամի դիմաց: Ամբողջությամբ տրամադրվել է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության նպատակով նախատեսված միջոցները՝ կազմելով 4.2 մլրդ դրամ: Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման ծրագրով նախատեսված ծախսերը կատարվել են 72.6%-ով՝ կազմելով 179.1 մլն դրամ: 82.1%-ով է կատարվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման ծախսերը՝ կազմելով 167.2 մլն դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոռոգման բնագավառի ծախսերն աճել են 2.2 անգամ կամ 12.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող <<Հազարամյակի մարտահրավեր>> դրամաշնորհային ծրագրի և ՀԲ աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի վերականգնման հրատապ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառում հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 26.5 մլրդ դրամ՝ 72.3%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի

կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ու էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վարկային ծրագրերի շրջանակներում միջոցների նախատեսվածից ավել օգտագործման հանգամանքով, որոնց շրջանակներում նախատեսված 7.4 մլրդ դրամի և 6.6 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է համապատասխանաբար 13.4 մլրդ դրամ և 11.8 մլրդ դրամ: Սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը նվազել են 45.3%-ով կամ 11.1 մլրդ դրամով, որով պայմանավորված՝ արձանագրվել է վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերի 11.5%-ով կամ 3.4 մլրդ դրամով նվազում: Մինչև նույն ժամանակ, 2009 թվականի ինն ամիսների համեմատ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 2.9 անգամ կամ 7.7 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 110.9 մլն դրամ է տրամադրվել <<Միջուկային վառելիք>> դասին, որի հաշվին ապահովվել է տվյալ դասում ներառված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ կազմելով ծրագրի 82.8%-ը և 23.1%-ով գերազանցելով 2009 թվականի ցուցանիշը:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում շուրջ 13.9 մլրդ դրամ են կազմել <<Վառելիքի այլ տեսակներ>> դասի ծախսերը՝ 73.4%-ով գերազանցելով ծրագրված հատկացումները, ինչը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով: Սակայն վերջիններս 45.3%-ով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, արդյունքում՝ տվյալ դասի ծախսերը նվազել են 44.9%-ով կամ 11.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 12.5 մլրդ դրամ են կազմել էլեկտրաէներգիայի դասի ծախսերը՝ ապահովելով իննամսյա ծրագրի 173.5% կատարողական: Գերազանցումը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և

բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի գծով իրականացված վճարումների բարձր ցուցանիշով, որը կազմել է 177.3%: Ծրագրի գերազանցում է արձանագրվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյունրի-2» ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի ծախսերում, որի շրջանակներում վճարվել է ավելի քան 136.1 մլն դրամ՝ ապահովելով 145.8% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգայի գծով ծախսերն ավելացել են ավելի քան 2.7 անգամ կամ 7.9 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում 35.9 մլն դրամ էր նախատեսվել «Ոչ էլեկտրական էներգիա» դասին՝ «Նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնման համար, որը, սակայն, չի իրականացվել:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության ոլորտում «Վ պետական բյուջեից իրականացվել են 10.5 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 70%-ը: Հատկացված միջոցներից 6 մլն դրամն ուղղվել է երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններին, 4.5 մլն դրամը՝ ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայության ծրագրի ծախսերին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 53.6%-ով՝ պայմանավորված «Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ» ծրագրի ծախսերի աճով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում տրանսպորտի բնագավառում «Վ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 18.5 մլրդ դրամ՝ 58.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբի ծախսերի 88.8%-ը կամ ավելի քան 16.4 մլրդ դրամը կազմել են ճանապարհային, 1%-ը կամ 186.9 մլն դրամը՝ օդային և 10.2%-ը կամ 1.9 մլրդ դրամը՝ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման և գյուղական ճանապարհների վերականգնման վարկային ծրագրերի շրջանակներում

միջոցների պակաս օգտագործման հանգամանքով, որոնց շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 5 մլրդ դրամ (44.8%), 131.4 մլն դրամ (5.1%) և 2.5 մլրդ դրամ (51.6%): Ճանապարհային տրանսպորտի դասում շուրջ 3 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին, որոնք օգտագործվել են 91.9%-ով: Նշենք, որ ճանապարհային տրանսպորտի դասում ընդգրկված՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման վարկային ծրագրի և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրի գծով նույնպես արձանագրվել է ծախսերի ցածր կատարողական՝ համապատասխանաբար 38.1% և 87.5%:

Օդային տրանսպորտի ծախսերում նույնպես արձանագրվել է ցածր կատարողական՝ 46.6% կամ 186.9 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր կատարողականով, որոնք նախատեսված 295.7 մլն դրամի դիմաց կազմել են 98.3 մլն դրամ: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ օդային տրանսպորտի ծախսերը նվազել են 7.3%-ով կամ 14.7 մլն դրամով:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով կամ 60.9 մլն դրամով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում կապի ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 246.6 մլն դրամ՝ 88.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Կատարված հատկացումներն ուղղվել են հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 26.5%-ով կամ 88.7 մլն դրամով:

<<Այլ բնագավառներ>> խմբի՝ զբոսաշրջության և զարգացման բազմանպատակ ծրագրերի դասերի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 678 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Նշված գումարից 655.4 մլն դրամի միջոցներն ուղղվել են զարգացման բազմանպատակ ծրագրերի դասում ընդգրկված՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող <<Հազարամյակի

մարտահրավեր>> դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմանը, որի կատարողականը կազմել է 101.2%: Իսկ զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով նախատեսված 39.1 մլն դրամից օգտագործվել է 22.6 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 29.2%-ով կամ 153.1 մլն դրամով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 66.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 85.6%-ով: Նշված գումարից 30.8 մլն դրամը տրամադրվել է տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին, որոնք կատարվել են 88.1%-ով: 35.6 մլն դրամ է տրամադրվել լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին, որոնց կատարողականը կազմել է 83.6%: Շեղումը պայմանավորված է Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման ծախսերի ցածր՝ 30% կատարողականով: Իսկ շինարարության գնագոյացման բնագավառում մեթոդաբանական, վերլուծական և տեխնիկական ծառայությունների ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 32.6 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը նվազել են 21.3%-ով կամ շուրջ 18 մլն դրամով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների խմբի փաստացի ցուցանիշը կազմել է շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 73.7%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի բարձր ցուցանիշով: Իսկ ընդգրկված ծախսային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.8 մլրդ դրամ կամ ծրագրվածի 98.5%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքագրվել է 706.5 մլն դրամ՝ նախատեսված 3.1 մլն դրամի դիմաց: Իսկ ընդգրկված ծրագրերից ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի գծով արձանագրվել է ծրագրային ցուցանիշների գերազանցում: Նշված ծրագրերի շրջանակներում օգտագործվել է

համապատասխանաբար 646.5 մլն դրամ և 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 104.4%-ը և 112.5%-ը: 587.7 մլն դրամ են կազմել <<<< 2010 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված մուտքերի հաշվին առանց սահմանափակման իրականացվող ծախսերը:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.1 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 63.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված վճարումների ցածր ցուցանիշով: Նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 64.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎՋԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի (շուրջ 1.4 մլրդ դրամ), <<Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն>> դրամաշնորհային ծրագրի (շուրջ 172.5 մլն դրամ) և Գերմանիայի զագացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի (շուրջ 237.5 մլն դրամ) շրջանակներում կատարված ծախսերով, որոնց գծով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ծախսեր չեն իրականացվել: Փոխարենը 2010 թվականի պետական բյուջեում ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային և վարկային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գումարներ չեն նախատեսվել:

Հաշվետու ժամանակահատվածում աղբահանման խմբում նախատեսված 20.3 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

2010 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում օդի աղտոտման դեմ պայքարի ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են ավելի քան 89.3 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 84.4 մլն դրամ են կազմել ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայությունների ձեռք բերման, և 4.9 մլն դրամ՝ թափոնների

ուսումնասիրության ծառայությունների ծախսերը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.2% ով՝ պայմանավորված ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայությունների ֆինանսավորման աճով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է շուրջ 2.2 մլրդ դրամ՝ 66.3%-ով կատարելով ինն ամսվա ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 914.7 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով: Նշենք, որ համանուն վարկային ծրագրի վճարումները կատարվել են 94.1%-ով և կազմել շուրջ 1.4 մլրդ դրամ: ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» ծրագրի շրջանակներում նախատեսված 62.1 մլն դրամի դրամաշնորհային միջոցները չեն օգտագործվել, իսկ կառավարության համաֆինանսավորումն օգտագործվել է նախատեսվածի 16%-ի չափով (2 մլն դրամ): Հաշվետու ժամանակահատվածում չեն կատարվել Ձկան պաշարների համալրման ու Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայությունների գծով նախատեսված ծախսերը, որոնք կազմում են համապատասխանաբար 3.1 և 5.6 մլն դրամ: ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագրի ծախսերը կատարվել են 84%-ով և կազմել շուրջ 172.5 մլն դրամ: Նշենք, որ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս 9 ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերն աճել են 5.5 անգամ կամ շուրջ 1.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային և վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերով:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 799.7 մլն դրամ և ապահովել ծրագրի 55.6% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային

ծրագրի շրջանակներում վճարումների ցածր ցուցանիշով, որոնք նախատեսված 840.8 մլն դրամի փոխարեն կազմել են 237.5 մլն դրամ: Նշենք, որ տվյալ ծրագրի գծով կառավարության մասնակցության գումարն օգտագործվել է նախատեսվածի 43.6%-ի չափով՝ կազմելով 207.2 մլն դրամ, իսկ դրամաշնորհային միջոցները՝ 26.9%-ով՝ կազմելով 30.3 մլն դրամ: Տվյալ դասում նախատեսված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով օգտագործվել է շուրջ 520.1 մլն դրամ կամ ծրագրվածի 95.8%-ը: Հարկ է նշել, որ տվյալ խմբում նախատեսված ծրագրերից երկուսը՝ ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի և Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 12.6 մլն դրամ և 11.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը նվազել են 42.4%-ով՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ 2009 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված 8 ծրագրեր 2010 թվականի պետական բյուջեում չեն նախատեսվել, որոնցից մեկը ՀԲ աջակցությամբ իրականացվող վարկային և երկուսը՝ դրամաշնորհային ծրագրեր են:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 35.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 84.7%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում միջոցների պակաս օգտագործման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերն ավելացել են 2.5 անգամ, որը հիմնականում պայմանավորված է 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակարանային շինարարությանը հատկացված գումարներով, ինչպես նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման և ԱԶԲ աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերի իրականացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերի 67.6%-ը կամ 23.8 մլրդ դրամ տրամադրվել է բնակարանային շինարարության խմբին՝ կազմելով ծրագրվածի 99.9%-ը: Օգտագործված միջոցներից շուրջ 23.7 մլրդ դրամն ուղղվել է բնակարանային շինարարությանը, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով, 143.9 մլն դրամը՝ անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության տրամադրմանը՝ 82.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ բնակարանային շինարարության խմբի ծախսերն աճել են 22.1 մլրդ դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2009 թվականի նույն ժամանակահատվածում բնակարանային շինարարության ծախսեր չէին իրականացվել:

Բաժնի ծախսերի 28.6%-ն ուղղվել է ջրամատակարարման բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 10.1 մլրդ դրամ կամ ինն ամսվա ծրագրի 62.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային 6 ծրագրերի գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ չեն օգտագործվել, ևս 3 ծրագրերի շրջանակներում վճարումներ ընդհանրապես չեն կատարվել: Մասնավորապես՝ ԱԶԲ աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում նախատեսված վճարումները կատարվել են 77.3%-ով և կազմել շուրջ 4.5 մլրդ դրամ, ՀԲ աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում՝ 79.9%-ով և կազմել ավելի քան 1.5 մլրդ դրամ, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի շրջանակներում՝ 13.8%-ով և կազմել 196.6 մլն դրամ, ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 32.4%-ով և կազմել 293.9 մլն դրամ, ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 56.8%-ով և կազմել 282.4 մլն դրամ, ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում՝ 70.2%-ով և կազմել 10.4 մլն դրամ: Չեն

կատարվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի (շուրջ 602.8 մլն դրամ), Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային և դրամաշնորհային ծրագրերի (համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ և 187 մլն դրամ) գծով նախատեսված վճարումները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՀԲ աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ 6.9%-ով գերազանցելով ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սուբսիդավորումը՝ համապատասխանաբար 608.7 մլն դրամի և 26.1 մլն դրամի չափով:

Ջրամատակարարման դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել են շուրջ 80.7 մլն դրամ կամ ծրագրվածի 94.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ջրամատակարարման բնագավառի ծախսերն աճել են 4.3%-ով կամ 414 մլն դրամով: Վերջինս պայմանավորված է ԱԶԲ աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման, ՀԲ աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման և Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի համապատասխանաբար 25.6, 84.7 և 44.9 տոկոս աճով, ինչպես նաև 2010 թվականին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմամբ, որոնք 2009 թվականի պետական բյուջեում չէին նախատեսվել: Սակայն հարկ է նշել, որ 2009 թվականի նույն

ժամանակահատվածում համապատասխանաբար 40.7 մլն դրամի և 737.6 մլն դրամի ծախսեր են կատարվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի և ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի շրջանակներում, որոնց գծով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում միջոցներ չեն նախատեսվել: 2009 թվականի հունվար-սեպտեմբերին 319.6 մլն դրամ է օգտագործվել Խմելու ջրի մատակարարման բարելավման, ՄԱԿ-ի զարգացման աջակցության և Մեծամորի ռեզերվային հորի կառուցման ծրագրերի շրջանակներում, որոնք նույնպես ընթացիկ տարվա բյուջեում չեն ընդգրկվել:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերի՝ փողոցների լուսավորման խմբում շուրջ 1.1 մլրդ դրամ է օգտագործվել համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման նպատակով՝ 84.7%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ փողոցների լուսավորման ծախսերը նվազել են 40.6%-ով:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով կատարվել են 281.5 մլն դրամի ծախսեր՝ 94.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նշված միջոցներն ուղղվել են տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 74.1%-ով՝ պայմանավորված նրանով, որ 2009 թվականին այս դասում պետական բյուջեից միջոցներ էին հատկացվել նաև Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին՝ 814.6 մլն դրամի չափով:

2010 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեի միջոցներով սոսոցապահության ոլորտում կատարվել են 36.6 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով նախատեսվածի 91.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցության, Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման, ինչպես նաև զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ցածր կատարողականով: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ

առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 3.8%-ով կամ ավելի քան 1.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի և ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից ծախսվել է 2.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրվածի 71.7%-ը: Մասնավորապես՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծրագրով նախատեսված միջոցներն օգտագործվել են 87.4%-ով (շուրջ 2.1 մլրդ դրամի չափով), իսկ ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման ծրագրի կատարողականը կազմել է 12.7% (77.3 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում արտահիվանդանոցային ծառայություններին տրամադրվել է շուրջ 12.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ պարաբժշկական ծառայություններում ներառված՝ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում նախատեսված շուրջ 1.2 մլրդ դրամի դիմաց օգտագործվել է ընդամենը 745.4 մլն դրամ: Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների ծախսերը (շուրջ 5.3 մլրդ դրամ, կատարողականը՝ 99.5%), և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը (1.7 մլրդ դրամ, կատարողականը՝ 95.8%):

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերի 41.6%-ը կամ շուրջ 5.3 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 27.6%-ը կամ շուրջ 3.5 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 4.2%-ը կամ ավելի քան 527.9 մլն դրամը՝ ստոմատոլոգիական ծառայությունների, 26.7%-ը կամ 3.4 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը, որոնց իննամսյա

ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 99.5, 99, 97.2 և 86.7 տոկոսով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերը նվազել են 2%-ով կամ 253.6 մլն դրամով, ընդ որում բոլոր խմբերում արձանագրվել է ծախսերի որոշակի անկում:

2010 թվականի ինն ամիսներին շուրջ 14.6 մլրդ դրամ օգտագործվել է հիվանդանոցային ծառայությունների շրջանակներում՝ կազմելով ծրագրվածի 97.9%-ը: Խմբի ծախսերի 26%-ը կամ շուրջ 3.8 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 29.3%-ը կամ շուրջ 4.3 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների և 44.7%-ը կամ 6.5 մլրդ դրամը՝ բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 99.6, 99.3 և 96.1 տոկոսով ապահովել են ծրագրի կատարումը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների շրջանակներում օգտագործված 3.8 մլրդ դրամից 1.6 մլրդ դրամը տրամադրվել է անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, 2.2 մլրդ դրամը՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.2 և 99.8 տոկոսով:

2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդանոցային ծառայությունների ծախսերն էական փոփոխություն չեն կրել՝ նվազել են 0.4%-ով կամ 65.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է անհետաձգելի բժշկական օգնության, ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ծախսերի նվազմամբ:

Ընթացիկ տարվա ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեից 2 մլրդ դրամ տրամադրվել է հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը՝ 98.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 7 ծրագրեր, որոնց գծով նախատեսված միջոցներն ամբողջությամբ ծախսվել են, բացառությամբ հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների, որոնց կատարողականը կազմել է 98.3% (շուրջ 1.3 մլրդ դրամ): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանրային առողջապահական ծառայությունների

ծախսերն ավելացել են 11.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների և իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը կազմել են 5.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 78.3%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 22 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են չորս վարկային և հինգ դրամաշնորհային ծրագրեր: Իսմբի ծախսերի շեղումը ծրագրվածից հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ ՀՀ-ում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցության և ՀՀ առողջապահության համակարգի հզորացման ծրագրերի, ինչպես նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի ծախսերի ցածր կատարողականով: ՀՀ-ում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցության և ՀՀ առողջապահության համակարգի հզորացման ծրագրերն ունեցել են համապատասխանաբար 6.3% (51.1 մլն դրամ), 27% (230.2 մլն դրամ) և 0.1% (336.1 հազար դրամ) կատարողական: Իսկ ՀԲ աջակցությամբ իրականացվող թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 22.5%-ը կամ 36 մլն դրամ: Նույն ծրագրի շրջանակներում իրականացվող ճապոնական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 6.4 մլն դրամ կամ նախատեսվածի 18.7%-ը:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 306.3 մլն դրամ՝ 66.9%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 7.7 մլն դրամ կամ նախատեսվածի 63.2%-ը: ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.1 մլրդ դրամ՝ 13.7%-ով գերազանցելով նախատեսված գումարը: Ծրագրի գերազանցում է արձանագրվել նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների

հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում, որի ծախսերը կազմել են 58.1 մլն դրամ կամ 117.9%:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի խմբում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 676.4 մլն դրամ կամ նախատեսվածի 95.2%-ը, իսկ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը՝ 276.9 մլն դրամ կամ ծրագրի 93.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերն ավելացել են 23%-ով կամ 973.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի մոտ կրկնակի աճով:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառներում 2010 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեից կատարվել են 11.4 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրով նախատեսված ցուցանիշի 92%-ը: Շեղումը հիմնականում գրանցվել է գրադարանների, արվեստի, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների և երիտասարդական ծրագրերի դասերում ընդգրկված ծրագրերի ցածր կատարողականով: 2009 թվականի առաջին ինն ամիսների համեմատ հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերն ավելացել են 0.9%-ով կամ 102.8 մլն դրամով:

Ընթացիկ տարվա ինն ամիսներին 1.1 մլրդ դրամ է տրամադրվել հանգստի և սպորտի ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 93.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման համար նախատեսված միջոցները 5.5%-ով պակաս են օգտագործվել՝ կազմելով 759.4 մլն դրամ, իսկ Սինգապուրում կայանալիք առաջին պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով նախատեսված 50.3 մլն դրամը օգտագործվել է 74.7%-ով, պակաս են օգտագործվել նաև օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին

ՀՀ նախագահի անվանական թոշակի համար նախատեսված միջոցները՝ կազմելով 88.2%: Չի օգտագործվել նաև Սևծովյան երկրների մարզական խաղերին մասնակցության ապահովման համար նախատեսված 4.8 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերը նվազել են 10.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի նվազմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ նախորդ տարի միջոցներ էին հատկացվել ձյուդոյի Եվրոպայի երիտասարդների առաջնության, համահայկական խաղերի և բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնության կազմակերպման և անցկացման նպատակով:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին մշակութային ծառայություններին պետական բյուջեից տրամադրվել է 6.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 90.2%-ը: Ծրագրի նկատմամբ շեղում է արձանագրվել տվյալ խմբի գրեթե բոլոր դասերում, բացառությամբ կինեմատոգրաֆիայի:

Հաշվետու ժամանակահատվածում 885.1 մլն դրամ է տրամադրվել գրադարաններին՝ ապահովելով նախատեսվածի 82.2%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի ցածր կատարողականով: Այդ նպատակով հաշվետու ժամանակահատվածում նախատեսված միջոցներն օգտագործվել են 50.2%-ով և կազմել 175.5 մլն դրամ: Սակայն 2009 թվականի ինն ամիսների համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.4%-ով, իսկ գրադարանային ծառայությունների ծախսերը՝ 5.8%-ով, ինչով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրադարանների ծախսերն աճել են 6.6%-ով:

Թանգարաններին և ցուցասրահներին 2010 թվականի ինն ամիսներին տրամադրվել է 1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 94.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծախսերի 94% կատարողականով, ինչպես նաև «Ներդրումներ թանգարաններում» ծրագրի գծով նախատեսված 27 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով: Պետք է նշել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում 27.6 մլն դրամ է օգտագործվել ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում,

որը 2010 թվականի պետական բյուջեում նախատեսված չէ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թանգարանների և ցուցասրահների ծախսերն աճել են 3.9%-ով՝ պայմանավորված հաշվետու ժամանակահատվածում ՀՀ համայնքային բյուջեներին 85.3 մլն դրամ սուբվենցիաների տրամադրմամբ, ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը կազմել են 161.4 մլն դրամ կամ ծրագրի 54.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծախսերի ցածր կատարողականով: Նշված ուղղություններով օգտագործվել է համապատասխանաբար 86.7 մլն դրամ և 54.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 42.5%-ը և 76.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը նվազել են 50.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնանորոգման ծախսերի նվազմամբ:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է 474.5 մլն դրամ կամ նախատեսված հատկացումների 93%-ը: Այս դասում ևս ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ մշակութային կազմակերպությունների ծախսերը նվազել են 37.8%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ համայնքային բյուջեներին տրամադրվող սուբվենցիաների նվազմամբ, ինչպես նաև 2009 թվականի ինն ամիսներին կենդանաբանական այգու ցուցադրությունների կազմակերպման նպատակով միջոցների տրամադրմամբ, որը 2010 թվականի պետական բյուջեում նախատեսված չէ:

Արվեստի ֆինանսավորմանը տրամադրվել է շուրջ 3.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է մշակութային միջոցառումների իրականացման և մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 89.9% կամ 873.3 մլն դրամ և 77.4% կամ 241.7 մլն դրամ: Արվեստի բնագավառի ծախսերի հիմնական մասն ուղղվել է հետևյալ ծրագրերի ֆինանսավորմանը. 27.7%-ը (873.3 մլն դրամ)՝ մշակութային միջոցառումների իրականացմանը, 19.9%-ը (629.1 մլն դրամ)՝ թատերական ներկայացումներին, 19.1%-ը (602.7 մլն դրամ)՝ երաժշտարվեստի

և պարարվեստի համերգներին, 13.2%-ը (415.9 մլն դրամ)՝ օպերային և բալետային արվեստի ներկայացումներին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արվեստի բնագավառի ծախսերն աճել են 9.3%-ով՝ հիմնականում պայմանավորված մշակութային միջոցառումների իրականացման ու մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի ավելացմամբ:

Անցած ժամանակահատվածում ամբողջությամբ օգտագործվել են կինեմատոգրաֆիայի բնագավառի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 428.9 մլն դրամ: Մասնավորապես՝ նշված գումարից 318.5 մլն դրամը տրամադրվել է կինոնկարների արտադրության, 82.2 մլն դրամը՝ Ազգային կինոծրագրերի, 23.2 մլն դրամը՝ փաստավավերագրական կինոծրագրերի, 5.1 մլն դրամը՝ կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուների պահպանման ծառայությունների ֆինանսավորմանը: Կինեմատոգրաֆիայի ծախսերը 1.9%-ով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը՝ պայմանավորված կինոնկարների արտադրության ծախսերի նվազմամբ:

2010 թվականի ինն ամիսներին հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 142.9 մլն դրամ կամ ծրագրի 63.7%-ը: Շեղումը պայմանավորված է հուշարձանների վերանորոգման և վերականգնման ծախսերի ցածր կատարողականով, որը կազմել է 37.9% կամ 49.6 մլն դրամ: Տվյալ դասում նախատեսված մյուս չորս ծրագրերը կատարվել են ամբողջ ծավալով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման ծախսերը նվազել են 2.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.5 մլրդ դրամ՝ 97.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է հրատարակչությունների և խմբագրությունների դասի ծրագրերում: Հատկացված գումարից 2.8 մլրդ դրամը (կատարողականը՝ 99%) կազմել են հեռուստահաղորդումների, 583.7 մլն դրամը (91.1%)՝ հրատարակչությունների և խմբագրությունների, 98.4 մլն դրամը (97.4%)՝ տեղեկատվության ձեռքբերման ծախսերը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ բաժնի ծախսերն աճել են 10.6%-ով կամ 333.3 մլն դրամով, որը հիմնականում

պայմանավորված է հեռուստատեսային ծառայությունների, հրատարակչական, տպագրական և տեղեկատվական ծառայությունների, գրականության հրատարակման և հանրային իրազեկման ապահովման ծախսերի ավելացմամբ:

Կրոնական և հասարակական այլ ծառայություններին 2010 թվականի ինն ամիսներին պետական բյուջեից տրամադրվել է 286 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 67.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է երիտասարդական ծրագրերի ցածր կատարողականով, որը կազմել է 55.5% կամ 148.5 մլն դրամ: Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 137.5 մլն դրամ՝ ապահովելով 88.9% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրոնական և հասարակական այլ ծառայությունների ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 279.3 մլն դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 96.7%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ մշակույթի ու սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 67.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.9% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրթության ծախսերը նվազել են 13.3%-ով՝ հիմնականում պայմանավորված կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի նվազմամբ:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեից ավելի քան 14.8 մլրդ դրամ տրամադրվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը, որն ապահովել է ծրագրի 99.7% կատարողական: Հատկացված միջոցներով իրականացվել են 8 ծրագրեր, մասնավորապես՝ 10.7 մլրդ դրամ տրամադրվել է հանրակրթական ուսուցմանը, 3.2 մլրդ դրամ՝ հանրակրթական ուսուցման գծով

պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 4.2%-ով կամ 597 մլն դրամով:

2010 թվականի ինն ամիսներին կրթության ոլորտի ծախսերի 52.1%-ն ուղղվել է միջնակարգ ընդհանուր կրթությանը: Այն կազմել է ավելի քան 35.3 մլրդ դրամ (որից 24.9 մլրդ դրամը՝ հիմնական և 10.5 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծախսերն են)՝ 98.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ավագ դպրոցների համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով:

Միջնակարգ ընդհանուր կրթության խմբին հատկացված միջոցների հիմնական մասը՝ 25.7 մլրդ դրամը, կազմել են հանրակրթական ուսուցման ծախսերը, որոնք կատարվել են 99.7%-ով: Համեմատաբար ցածր՝ 96.6% և 91.8% կատարողական է արձանագրվել արտակարգ ունակություններ դրսևորված երեխաների հանրակրթության կազմակերպման և ներառական կրթության ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 1 մլրդ և 87.3 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է միջնակարգ ընդհանուր կրթության խմբի ծախսերի 6.9% նվազում, որը հիմնականում պայմանավորված է հանրակրթական ուսուցման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծախսերը կազմել են ավելի քան 3.3 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 97.3%-ը, որից 1.3 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 2 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Մասնավորապես՝ 97.2% կատարողական է արձանագրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերում, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ: 957.6 մլն դրամ է տրամադրվել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրին, որը կատարվել է 97.5%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 3%-ով:

2010 թվականի ինն ամիսներին բարձրագույն կրթության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 5.2 մլրդ դրամ (որից 4.8 մլրդ դրամը

բարձրագույն մասնագիտական կրթության և 454.4 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն են)՝ ապահովելով ծրագրի 97.2%-ով կատարում: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի համեմատաբար ցածր կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսվածի 83.7%-ը կամ 604 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 3.6%-ով:

Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերն անցած ինն ամիսներին կազմել են 2.2 մլրդ դրամ (որից շուրջ 1.7 մլրդ դրամը՝ արտադպրոցական դաստիարակության, 546.7 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են)՝ ապահովելով ծրագրի 94.7%-ով կատարում: Շեղումը պայմանավորված է հիմնականում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման, վերապատրաստման ծառայությունների և ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի ծախսերի ցածր կատարողականով (համապատասխանաբար 36.8%, 76.3% և 9.7%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերն աճել են 7.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2010 թվականի պետական բյուջեում հասարակական կազմակերպությունների կողմից արտադպրոցական դաստիարակության և ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրերի նախատեսմամբ, որոնց համար նախորդ տարի հատկացումներ չեն եղել, ինչպես նաև երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման ու դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայությունների ծախսերի աճով:

2010 թվականի ինն ամիսներին կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 6.5 մլրդ դրամ կամ ծրագրի 64.9%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 33 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են երեք վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր: Շեղումը հիմնականում առաջացել է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական և միջին մասնագիտական

ուսումնական հաստատությունների հիմնանորոգման, կրթական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության և ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրերի ծախսերի ցածր կատարողականի արդյունքում: ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության առաջին և երկրորդ, ինչպես նաև Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրերի գծով օգտագործվել է նախատեսված միջոցների համապատասխանաբար 1.3, 47.2 և 70.8 տոկոսը (համապատասխանաբար 504 հազ. դրամ, 681.2 մլն դրամ և 104.6 մլն դրամ): Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների շրջանակներում մի շարք այլ ծրագրերի գծով ևս արձանագրվել է ցածր կատարողական: Ավելի քան 26.9 մլն դրամ է տրամադրվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման համար՝ կազմելով ծրագրի 36.2%-ը: Կրթական օբյեկտների շինարարության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 31.9%-ով և կազմել շուրջ 253.8 մլն դրամ: Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգմանը տրամադրվել է 92.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 63.2%-ով կատարում: Խմբում ընդգրկված 18 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 55.8%-ով կամ 8.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների և ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման և շինարարության ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 341.8 մլն դրամ տրամադրվել է այլ դասերին չպատկանող կրթության բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 95.9% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2010 թվականի ինն ամիսներին սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 181.3 մլրդ դրամ՝ 98.7%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը: Բաժնի բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ, սակայն

առավելագույն գումարը բաժին է ընկել ծերության խմբի ծրագրերին: 2009 թվականի ինն ամիսների համեմատ սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերն ավելացել են 1.2%-ով կամ 2.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության, հղիության ու ծննդաբերության նպաստի, ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի և գործազրկության նպաստի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 800 մլն դրամ է տրամադրվել վատառողջության և անաշխատունակության խմբի ծախսերին՝ ապահովելով ծրագրի 86.7%-ով կատարում: Նշված հատկացումներից 116.9 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, 683.1 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 90.4%-ով և 86.1%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման, ինչպես նաև հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 89.6% (576.5 մլն դրամ) և 54.1% (38.7 մլն դրամ): Հիմնականում վերը նշվածով պայմանավորված՝ Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վատառողջության և անաշխատունակության խմբի ծախսերը նվազել են 9.8% ով:

Ծերության բնագավառի ծրագրերին 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 133.2 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ցուցանիշի 99.3%-ը: Նշված գումարից 110.6 մլրդ դրամն ուղղվել է ապահովագրական կենսաթոշակներին, 15 մլրդ դրամը՝ սպայական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակներին, 4.6 մլրդ դրամը՝ սոցիալական կենսաթոշակներին, 1.7 մլրդ դրամը՝ շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակներին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծերության բնագավառի ծախսերը էական փոփոխություն չեն կրել:

Հարազատին կորցրած անձանց հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 105.2 մլն դրամ կամ նախատեսվածի 82.1%-ը: Նշված գումարից 95 մլն դրամը տրամադրվել է Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին, որը կազմել է

ծրագրվածի 81.8%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերն աճել են 4.5%-ով:

Ընտանիքի անդամների և զավակների խմբում պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 32.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը: Մասնավորապես՝ շուրջ 22.8 մլրդ դրամ են կազմել ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ծախսերը, որոնք կատարվել են 99.7%-ով: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը կազմել է 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.5%-ը: 2.5 մլրդ դրամ է տրամադրվել հղիության և ծննդաբերության նպաստներին՝ կազմելով ծրագրի 99.5%-ը, 1.7 մլրդ դրամ՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստներին՝ կազմելով ծրագրի 96.2%-ը: Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայությունները կազմել են 1.2 մլրդ դրամ կամ ծրագրի 95.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ <<Ընտանիքի անդամներ և զավակներ>> խմբի ծախսերն աճել են 6.4%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության, հղիության և ծննդաբերության նպաստի, ինչպես նաև մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի ծախսերի ավելացմամբ:

Սոցիալական ոլորտի ծախսերից 3.9 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկության խմբին, որը կազմել է ծրագրի 92.3%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է վարձատրվող հասարակական աշխատանքների, գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց մասնագիտական ուսուցման ծրագրերում: Մասնավորապես՝ գործազրկության նպաստի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 3.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.2%-ը, վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագիրը, որի շրջանակներում օգտագործվել է 437.6 մլն դրամ, կատարվել է 79%-ով, իսկ գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց մասնագիտական ուսուցման ծրագրի ծախսերը կատարվել են 41.6%-ով՝ կազմելով 78 մլն դրամ: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գործազրկության խմբի ծախսերն աճել են 19.8%-ով՝ հիմնականում պայմանավորված գործազրկության նպաստի ծախսերի աճով:

Բնակարանային ապահովման ծախսերը, որոնց համար 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 801.5 մլն դրամ, իրականացվել են 84.6%-ով և կազմել 677.9 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության ծրագրի ցածր կատարողականով: Այդ նպատակով օգտագործվել է 217.4 մլն դրամ կամ նախատեսվածի 72.1%-ը: 460.4 մլն դրամ է տրամադրվել զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ծրագրի շրջանակներում, որը կատարվել է 92.1%-ով և 78.2%-ով զիջել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Արդյունքում 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 74.9%-ով:

Սոցիալական հատուկ արտոնություններին (այլ դասերին չպատկանող) տրամադրվել է 3.8 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 98.8% կատարողական: Նշված գումարից 1.9 մլրդ դրամը կազմել են ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության ծախսերը, որոնք կատարվել են 99.3%-ով: Ավելի քան 1.2 մլրդ դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման նպատակով, որը կատարվել է 99.9%-ով: 640.1 մլն դրամ են կազմել վետերանների պատվովճարները, որոնք կատարվել են 95.7%-ով: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական հատուկ արտոնությունների ծախսերն աճել են 2.3%-ով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 6.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 95.6%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (996.4 մլն դրամ կամ 91.7%),

նախարարությունների աշխատակազմերի պահպանման ծախսերի (1 մլրդ դրամ կամ 92.6%), կենսաթոշակային ապահովության ու ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների (1.4 մլրդ դրամ կամ 96.2%) և սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների (350.2 մլն դրամ կամ 89.1%) ծրագրերի գծով: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ տվյալ խմբում ընդգրկված՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում կատարվել են 104.7 մլն դրամի վճարումներ՝ 175.9%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը:

2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծախսերն աճել են 19.8%-ով՝ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի, կենսաթոշակային ապահովության ու ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների, ինչպես նաև գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով: Մասնավորապես՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստի ծախսերը կազմել են 2 մլրդ դրամ՝ 53.1%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2010 թվականի ինն ամիսներին «կառավարության պահուստային ֆոնդի» գծով նախատեսված 16.1 մլրդ դրամից օգտագործվել է ընդամենը 7.4 մլրդ դրամ կամ 45.7%-ը: Նշենք, որ 2009 թվականի նույն ժամանակահատվածում «« կառավարության պահուստային ֆոնդի» օգտագործվել էր 23.5 մլրդ դրամ, այսինքն՝ նշված ծախսերը նվազել են 68.7%-ով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 78.8 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի 45%-ը: Ծրագրից շեղումը մեծ մասամբ արձանագրվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում՝ բյուջեի եկամուտների ծրագրի գերազանցման և ծախսերի գծով առկա տնտեսումների արդյունքում: Պակասուրդի մեծությունը զգալիորեն զիջել է նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 47.8%-ով կամ շուրջ 72.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին վարկավորման նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի ներքին ֆինանսավորումը կազմել է շուրջ 35.4 մլրդ դրամ կամ ծրագրի 28%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է պետական բյուջեի ազատ միջոցների օգտագործման ցուցանիշի գծով: Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով նախատեսվել էր շուրջ 77.9 մլրդ դրամ օգտագործել բյուջեի 2010 թվականի տարեսկզբի և ժամանակավորապես ազատ միջոցներից, սակայն փաստացի արդյունքներով նշված միջոցներն ավելացել են 6.2 մլրդ դրամով:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում պետական (գանձապետական) պարտատոմսերի գծով ստացվել են 15.4 մլրդ դրամի չափով զուտ մուտքեր՝ նախատեսված 22.7 մլրդ դրամի դիմաց, պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 71 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի հասույթի և 55.6 մլրդ դրամի մարման փաստացի ցուցանիշների պարագայում: Պակասուրդի թերի ֆինանսավորման պատճառը անցած ժամանակահատվածում նախատեսվածից պակաս ծավալով տեղաբաշխումներն են: Թերտեղաբաշխումները պայմանավորված են դոլար/դրամ փոխարժեքի վարքագծի արդյունքում բանկային հանկարգում առկա սպասումներով, երբ ներդրումներ կատարվում էին մեծամասամբ արտարժույթային ակտիվներում:

2010 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 1,050,000.0 հազ. դրամ ծավալով: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 294,034.0 հազ. դրամի պարտատոմսեր, որից

մուտքը կազմել է 295,025.5 հազ.դրամ: Փաստորեն, 2010 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական պարտատոմսերի թողարկման ծրագրի իրագործման արդյունքում ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 157,420,108.0 հազ. դրամ: Բոլոր պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 1470 օր (2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ 1431 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 11.57% (2009 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ 9.96%): Ներքին պետական պարտքը բաղկացած է 23.8% ՊԿՊ-ից, 53.5% ՄԺՊ-ից, 22.4% ԵՊ-ից և 0.3% ԽՊ-ից:

2010 թվականի ընթացքում շարունակվել է ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հաշվետու ժամանակահատվածում հետգնումը կազմել է 1 մլն դրամ կամ նախատեսված գումարի 100%-ը: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 97.3%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: Անցած ժամանակահատվածում 772.8 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը, որը կատարվել է նախատեսված ծավալով:

Հաշվետու ժամանակահատվածում պակասուրդի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են 20.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 19.8%-ը: 43.5 մլն դրամ է տրամադրվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով: Անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 7.7 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով իննամսյա ծրագրի 101.1%-ը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից ստացված միջոցների հաշվին տրամադրված վարկերի ծրագրի գերազանցմամբ: ՌԴ կողմից ՀՀ 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տրամադրվել են շուրջ 5.8 մլրդ դրամ, որից 5 մլրդ դրամը հատկացվել է տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի առաջին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, 350 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ագրային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 414.2 մլն դրամը՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓՄԶ-ին: 98.2 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային

շինարարության վարկավորման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 894.2 մլն դրամ է տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացված նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 75.2%-ը: Նշված գումարից 719.2 մլն դրամը տրամադրվել է վարկային միջոցներից, 175 մլն դրամն ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում: Ավելի քան 903.8 մլն դրամի վարկեր են տրամադրվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրում ներգրավված տնտեսավարող սուբյեկտներին՝ կազմելով ծրագրվածի 73.1%-ը:

Ավելի քան 17.1 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ ծրագրված 3.7 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 13.1 մլրդ դրամը մուտքագրվել է նախորդ տարի Ռուսաստանի Դաշնության հատկացրած վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձից, որն ուղղվել է նշված միջոցների համար բացված կայունացման դեպոզիտային հաշվի համալրմանը: Վերադարձված գումարից 12.2 մլրդ դրամը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից: Նշենք, որ ՌԴ վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձը ծրագրով նախատեսված չէ, առանց որի ներքին վարկերի վերադարձի իննամսյա ծրագրի կատարողականը կազմում է 107%:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է շուրջ 43.4 մլրդ դրամով՝ նախատեսված 48.8 մլրդ դրամի դիմաց:

Արտաքին փոխառու միջոցներից պակասուրդի ֆինանսավորումը կատարվել է 95.4%-ով՝ կազմելով 72.4 մլրդ դրամ: Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվել են ավելի քան 80.1 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ ապահովելով նախատեսվածի 95.2%-ը: Ծրագրվածից պակաս միջոցներ են ստացվել հիմնականում ՀԲ աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (74.9%-ով) և ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման (91.3%-ով) ծրագրերի գծով, իսկ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի

ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի շրջանակներում նախատեսված վարկային միջոցները չեն ստացվել: Մինևույն ժամանակ, ծրագրվածից ավել միջոցներ են ստացվել հիմնականում Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման (շուրջ 11.7 մլրդ դրամ՝ 178.6%), համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման (13.4 մլրդ դրամ՝ 181.1%), Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման (6.3 մլրդ դրամ՝ 137.3%) ծրագրերի գծով: Անցած ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են 25.3 մլրդ դրամի վարկային միջոցներ:

2010 թվականի ինն ամիսների ընթացքում 7.7 մլրդ դրամ (ծրագրվածի 93.3%-ը) ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 5.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի, 147.5 մլն դրամ՝ Գյուլատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, 64.4 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 667.6 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, շուրջ 44.1 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և շուրջ 285.7 մլն դրամ՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորումը կատարվել է 106.9%-ով և կազմել -29 մլրդ դրամ: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակավորապես ազատ միջոցները նախատեսված -362 մլն դրամի փոխարեն կազմել են -2.3 մլրդ դրամ:

Անցած ժամանակահատվածում 26.3 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին, որը կատարվել է նախատեսված ծավալով: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 93.6 մլն դրամի վճարում, որից 44.8 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է

2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 733.5 մլն դրամ: